

**18 ամսականում կատարված այցելությունը**  
 Հաշվեք Ձեր երեխայի օգտագործած բառերի թիվը (ցանկացած լեզվով)։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան հասկացնել տալիս իր ուզածը (մատո՞վ է ցույց տալիս, քրթփաշտո՞ւմ է, լալի՞ս է, բառե՞ր է արտասանում)։  
 Ձեր երեխան վազո՞ւմ է։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան խաղում ուրիշ երեխաների հետ։  
 Ձեր երեխան անընդհատ կրկնո՞ւմ է միևնույն անբնական գործողությունները կամ շարժումները։  
 Ձեր հարցերը \_\_\_\_\_

---



---

**24 ամսականում կատարված այցելությունը**  
 Հաշվեք Ձեր երեխայի օգտագործած բառերի թիվը (ցանկացած լեզվով)։  
 Խոսելիս Ձեր երեխան կապակցո՞ւմ է 2 բառ։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան արձագանքում, երբ Դուք «ո՛չ» եք ասում նրա ուզած որևէ բանին։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան խաղում ուրիշ երեխաների հետ։  
 Ձեր երեխան անընդհատ կրկնո՞ւմ է միևնույն անբնական գործողությունները կամ շարժումները։  
 Ձեր հարցերը \_\_\_\_\_

---



---

**36 ամսականում կատարված այցելությունը**  
 Ձեր երեխան պարզ նախադասություններ օգտագործո՞ւմ է։  
 Այլ մարդիկ հասկանո՞ւմ են Ձեր երեխայի ասածների մեծ մասը։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան արձագանքում, երբ Դուք «ո՛չ» եք ասում նրա ուզած որևէ բանին։  
 Ձեր երեխան կարողանո՞ւմ է ոտքով գնդակին հարվածել։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան խաղում ուրիշ երեխաների հետ։  
 Ձեր հարցերը \_\_\_\_\_

---



---

**48 ամսականում կատարված այցելությունը**  
 Ձեր երեխան քանի՞ բառ է օգտագործում նախադասության մեջ։  
 Այլ մարդիկ ամբողջությամբ հասկանո՞ւմ են Ձեր երեխայի ասածները։  
 Ձեր երեխան ի՞նչ կարող է նկարել։  
 Ինչպե՞ս է Ձեր երեխան խաղում ուրիշ երեխաների հետ։  
 Ձեր հարցերը \_\_\_\_\_

---



---

**ԻՆՉ ԱՆԵԼ, ԵՐԲ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՔ**

**Կիսվեք Ձեզ մտահոգող հարցերով**


- Պատրաստ ե՞ք մտքերն ու մտահոգությունները կիսեք Ձեր երեխայի բժշկի հետ։
- Այցելության սկզբում տեղյակ պահեք բժշկին, որ մտահոգություն կամ հարց ունեք Ձեր երեխայի վերաբերյալ։
- Հնարավոր, որ Ձեր երեխայի բժիշկն առաջարկություններ ունենա այն կապակցությամբ, թե ինչ քայլեր պետք է հաջորդեն։ Նա կարող է Ձեզ մեկ այլ բժշկի մոտ ուղարկել կամ այնպիսի միջոցառումներ առաջարկել, որոնք կօգնեն Ձեր երեխային։

**Հարցեր տվեք**


- Ի՞նչ կարող եմ անել իմ երեխայի զարգացմանը նպաստելու համար։
- Ջարգացման ի՞նչ տիպի փոփոխություններ պետք է փնտրեմ նրա մոտ։
- Ուրիշ ու՞մ հետ կարող եմ խոսել ինձ մտահոգող հարցրի մասին։
- Ե՞րբ պետք է նոր ժամադրություն ստանամ։

**Կանոնավոր գրանցումներ կատարեք**

- Ձեր երեխայի վերաբերյալ բոլոր տվյալները դասավորված պահեք մի տեղում։ Թղթապանակը հարմար է այդ նպատակի համար։
- Պահեք Ձեր երեխայի զարգացման մասին բժշկի հետ ունեցած բոլոր գրույցների գրանցումները։
- Գրի առեք Ձեզ մտահոգող հարցերի մասին Ձեր երեխայի բժշկի կամ այլ մասնագետների հետ ունեցած գրույցների ամսաթվերը և ժամերը։



PHFE WIC Program  
 1-888-942-2229  
 www.phfewic.org  
 www.WICOnlineEducation.org  
 This institution is an equal opportunity provider.



**ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ՁԵԶ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՐԿԱՎՈՐ**

Ձեր առաջին զանգը հարկավոր է կատարել Ձեր երեխայի բժշկին  
 Բացի այդ, Ձեր համայնքում կան ծառայություններ, որոնք կպատասխանեն Ձեր հարցերին Ձեր երեխայի զարգացման մասին։

Վաղ մեկնարկ՝ (800) 515-2229  
 • Եթե Ձեր երեխան 36 ամսական չկա, բժիշկը կարող է նրան ուղարկել «Վաղ մեկնարկ» (Early Start)՝ մի ծրագիր, որն օգնում է մանուկներին ուսման և զարգացման հարցում։  
 • Իր երեխայի զարգացմամբ մտահոգված ցանկացած ծնող կարող է զանգահարել և առաջարկել ծրագրում ընդգրկել իր երեխային։  
 Բժշկի ուղեգիր անհրաժեշտ չէ։

**Դպրոցական շրջանը**

• Եթե Ձեր երեխան 3 տարեկան կամ ավելի մեծ է՝ դիմեք Ձեր տեղական դպրոցին կամ դպրոցական շրջանին։ Խնդրեք Ձեր երեխայի գնահատում կատարել։

**Շրջանի տեղեկատու գիծ՝ 211**

• Չանգահարեք 2-1-1՝ համայնքային ծառայությունների տեղեկատվություն, ներառյալ՝ ծննդից մինչև 5 տարեկան երեխաների համար։

**Ինչ՞ս խոսել բժշկի հետ Ձեր երեխայի մասին**



**Դուք ամենալավն եք ճանաչում Ձեր երեխային**

- Յուրաքանչյուր երեխա տարբեր է։
- Դուք եք գիտակը և մասնագետը։
- Դուք գիտեք, թե ինչպես է Ձեր երեխան պատասխանում Ձեզ և այլ անձանց, լսում ու հասկանում, թոթովում ու խոսում և օգտագործում ձեռքերն ու ոտքերը։
- Բժշկի հետ խոսեք Ձեր երեխայի մասին
- Դա բժշկին կօգնի հասկանալ, թե ինչ վիճակում է Ձեր երեխան։
- Տարբեր ընտանիքներ տարբեր պատկերացում ունեն երեխայի զարգացման վերաբերյալ։ Ձեր երեխայի բժշկին պատմեք, թե ինչ եք Դուք մտածում այդ կապակցությամբ։
- Ձեր երեխայի բժշկին հարցրեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի օգնեք Ձեր երեխային աճել ու զարգանալ։ Բժիշկը կարող է Ձեզ օգտակար խորհուրդներ տալ այն մասին, թե ինչ կարող եք անել։
- Նշանակված այցելությունների ժամանակ խոսեք Ձեզ մտահոգող հարցերի մասին։ Եթե դեռ մտահոգություններ ունեք, նոր ժամադրություն ստացեք։

# ԲԺՇԿԻ ՀԵՏ ԽՈՍԵՔ ՁԵՐ ԵՐԵՒԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՆՈՐԱԾՆԻՑ ՄԻՆՁԵՎ 2 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- Ժպտալ.
- դուներունալ.
- ծծել և կուլ տալ
- փորիկի վրա պառկած ժամանակ բարձրացնել գլուխն ու կրծքավանդակը:



### Փորձեք հետևյալը

- Ամուր գրկեք Ձեր մանկանը, երբ նա լալիս է:
- Խոսեք Ձեր մանկան հետ և երգեք նրա համար:
- Ձեր մանկանը պատմվածքներ պատմեք ու կարդացեք:
- Խրախուսեք, որ խաղալիքներով խաղա:



## 3-ԻՑ 6 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- թոթովել և ձայներ հանել.
- Ժպտալ.
- շրջվել դեպի ձայնը.
- խաղալիքը մի ձեռքից մյուսը փոխանցել.
- պտտվել պառկած

տեղում (4 ամսականում).

- առանց հենվելու նստել (6 ամսականում):

### Փորձեք հետևյալը

- Ձեր մանկանը նկարագարող գրքեր կարդացեք ու միասին ուսուսասիրեք դրանք:
- Խոսեք Ձեր մանկան հետ ու երգեք նրա համար:
- Քնեցնելիս անհրաժեշտ գործողությունների համակարգ մշակեք:
- Խաղեր խաղացեք նրա հետ, ինչպես՝ «կուկու» պահմտոցին:

## 7-ԻՑ 9 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- Արձակել հնչյուններ ինչպիսին են մամա» և «պապա»
- Արձագանքել իրենց անվանը.
- պյուրեի վերածված ուտելիք ուտել.
- սողալ:



### Փորձեք հետևյալը

- Ձեր մանկանը նկարագարող գրքեր կարդացեք ու միասին ուսուսասիրեք դրանք:
- Խոսեք և երգեք Ձեր մանկան հետ:
- Քնեցնելիս անհրաժեշտ գործողությունների համակարգ մշակեք:
- Խաղեր խաղացեք նրա հետ, ինչպես՝ «կուկու» պահմտոցին

## 10-ԻՑ 12 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- 1-3 բառ արտասանել՝ «մամայից» ու «պապայից» բացի.
- «տիկ» կամ «կուկու» պահմտոցի խաղալ.
- երկու խաղալիք իրար հարվածել.
- ինքնուրույն մի քանի քայլ կատարել:
- Ինքնուրույն մատներով սնվել



### Փորձեք հետևյալը

- Ձեր երեխայի հետ նկարագարող գրքեր կարդացեք ու միասին ուսուսասիրեք:
- Խոսեք այն մասին, ինչ Դուք և Ձեր երեխան միասին անում կամ տեսնում եք:
- Ձեր երեխայի արտասանած ձայները և գործողությունները բառերի վերածեք:
- Քնեցնելիս շարունակեք սովորություն դարձած գործողությունները:
- Լավ վարքի համար գովեք Ձեր երեխային:

## 13-ԻՑ 15 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- 3-5 բառ արտասանել՝ «մամայից» ու «պապայից» բացի.
- մարմնի մեկ կամ ավելի մասերը ցույց տալ.
- խմել բաժակից.
- ինչպես հարկն է քայլել ինքնուրույն:



### Փորձեք հետևյալը


- Խոսեք Ձեր մանկան հետ և կարդացեք նրա համար:
- Երգեք և խաղացեք:
- Ձեր մանկանը խրախուսեք, որ բառեր նմանակի:
- Քնեցնելիս շարունակեք սովորություն դարձած գործողությունները:

## 16-ԻՑ 23 ԱՄՍԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- 15-50 բառ արտասանել.
- հասկանալ պարզ հրահանգները (օրինակ՝ «արի մամայի մոտ»).
- սեր ցույց տալ, համբուրել.
- արագ քայլել կամ վազել.
- օգտվել գդալից:

### Փորձեք հետևյալը

- Կարդացեք Ձեր մանկան համար և խոսեք նրա հետ:
- Երգեք և խաղացեք:
- Հարցեր տվեք Ձեր մանկանը:
- Լավ վարքի համար գովեք Ձեր մանկանը:
- Երբ հնարավոր է, ընտրություն տվեք:



## 2 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- կապակցել 2 բառ.
- կատարել երկքայլ հրաման.
- մատիտով գծեր քաշել.
- վազել և ոտքով հարվածել գնդակին.
- առանց մեծ դժգոհության մի զբաղմունքից մյուսին անցնել:



### Փորձեք հետևյալը

- Գրքեր կարդացեք ու միասին ուսուսասիրեք, երեխային ասացեք, որ տառեր ու բառեր ցույց տա, նկարագրի նկարները, պատմի գրքում տեղի ունեցող դեպքերը:
- Ձեր երեխայի հետ խոսեք ու երգեք:
- Ձեր երեխայի բառերը արտահայտությունների և նախադասությունների վերածեք:
- Լավ վարքի համար գովեք Ձեր երեխային:
- Երբ հնարավոր է, ընտրություն տվեք:
- Քնեցնելիս շարունակեք սովորություն դարձած գործողությունները:
- Երեխային թողնելուց կամ մի զբաղմունքից մյուսին անցնելուց առաջ նրան նախապատրաստեք և 5 րոպե տվեք համակերպվելու համար, որպեսզի նա չվշտանա:

## 3 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- 3 բառից բաղկացած արտահայտություններ կազմել.
- երեք ակնանի հեծանիվ վարել.
- շրջանակ արտանկարել.
- Ձեր օգնությամբ հագնվել:

## 4 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ՝

- 4 կամ ավելի բառերից բաղկացած նախադասություններ կազմել.
- մարդ նկարել՝ մի քանի մարմնի մասով.
- ասել իրենց անունը և ազգանունը.
- թռչկոտել և ցատկել մեկ ոտքի վրա:

### Փորձեք հետևյալը

- Գրքեր կարդացեք ու միասին ուսուսասիրեք, երեխային ասացեք, որ տառեր ու բառեր ցույց տա, նկարագրի նկարները, պատմի գրքում տեղի ունեցող դեպքերը:
- Ձեր երեխային այնպիսի հարցեր տվեք, որոնք նրան իր մտքերն արտահայտելու հնարավորություն են տալիս:
- Այլ երեխաների հետ խաղալու հնարավորություններ ստեղծեք:
- Երբ հնարավոր է, ընտրություն տվեք:
- Գովեք Ձեր երեխային, երբ օգնում է Ձեզ:
- Խրախուսեք Ձեր երեխային, որ խոսի ընկերների և դպրոցի մասին:

## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՔ ՁԵՐ ԺԱՄԱԴՐՈՒԹՅԱՆԸ

Այս հարցերի օգնությամբ խոսեք Ձեր երեխայի բժշկի հետ երեխայի զարգացման մասին: Հա տկացված տարածության վրա նշումներ կատարեք կամ ձեր սեփական հարցերը գրեք նախքան բժշկի հետ հանդիպելը:

2 և 4 ամսականում կատարված այցելությունները Ինչպե՞ս է Ձեր երեխան արձագանքում, երբ նրա հետ խոսում եմ:

Ե՞րբ է Ձեր երեխան ձայներ հանում:

Ի՞նչ տիպի ձայներ է հանում Ձեր երեխան:

Ե՞րբ է Ձեր երեխան ժպտում:

Ինչպե՞ս է շարժվում Ձեր երեխան (գլուխն ուղիղ պահու՞մ է, թներով ու ոտքերով հարվածու՞մ է, թավալվու՞մ է):

Ձեր հարցերը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

6 և 9 ամսականում կատարված այցելությունները Ի՞նչ տիպի ձայներ է հանում Ձեր երեխան:

Ինչպե՞ս է շարժվում Ձեր երեխան (նստու՞մ է, թավալվու՞մ է, սողու՞մ է):

Ինչպե՞ս է Ձեր երեխան առարկաներ վերցնում:

Ինչպե՞ս է Ձեր երեխան հասկացնել տալիս իր ուզածը (մատո՞վ է ցույց տալիս, քրթմաջու՞մ է, լալի՞ս է):

Ինչպե՞ս է Ձեր երեխան արձագանքում Ձեզ (նայու՞մ է Ձեզ

վրա, նկատու՞մ է Ձեզ, երբ խոսում եք):

Ի՞նչ է ուտում ձեր երեխան:

Ձեր հարցերը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

12 և 15 ամսականում կատարված այցելությունները Հաշվեք Ձեր երեխայի օգտագործած բառերի թիվը (ցանկացած լեզվով).

Ինչպե՞ս է Ձեր երեխան հասկացնել տալիս իր ուզածը (մատո՞վ է ցույց տալիս, քրթմաջու՞մ է, լալի՞ս է, բա՞ռ է արտասանում):

Ձեր երեխան քայլու՞մ է:

Ինչպե՞ս է Ձեր երեխան արձագանքում Ձեզ (նայու՞մ է Ձեզ վրա, խաղու՞մ է Ձեզ հետ, փորձու՞մ է խոսել Ձեզ հետ):

Ինչպե՞ս է Ձեր երեխան խաղում Ձեզ հետ

Ձեր երեխան խմու՞մ է գավաթից:

Ձեր հարցերը \_\_\_\_\_

\_\_\_\_\_